

ՀԱՅԵՐԵՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ռ. Ն. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Յուրաքանչյուր բառարանի կազմության նախապատրաստման ժամանակ առաջ է քաշվում բառապաշարի ընտրության հարցը, ի՞նչ սկզբունքով է կազմվում բառարանի բառացանկը, այսինքն՝ ինչպիսի՞ բառեր են մտնում բառարան, ինչպիսի՞ բառեր են դուրս մնում բառարանից: Բառերի հավաքման սկզբունքները կախված են բառարանի տեսակից, նրանից, թե ինչ նպատակների համար է այն կազմվում և ո՞ւմ համար է այն նախատեսված: Չափազանց կարևոր է բառարանում ցույց տալ ժամանակակից լեզվի բառապաշարի հարուստ թաղամասնությունը, որպեսզի ընթերցողը կարողանա իմանալ, թե ե՞րբ և ի՞նչն է ընդունելի և ե՞րբ և ինչի՞ց պետք է խուսափել:

Այժմ տեսնենք, թե ինչ սկզբունքներով է ընտրված ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանների բառապաշարը:

Քննության է ենթարկվում ներքոհիշյալ բացատրական բառարանների բառապաշարը.

1. Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944—45, հ. 1—4 (այսուհետև՝ ՀԲԲ):

2. Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հեղինակային կոլեկտիվ, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1969—1981, հ. 1—4 (այսուհետև՝ ԺԲԲ):

3. Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, հ. 1—2 (այսուհետև՝ ԱԲԲ):

«Ժամանակակից գրական հայերենը,—գրում է Էդ. Աղայանը,—զարգացման, մշակման ու կատարելագործման արդեն պատկառելի պատմություն ունի: Անցնելով կազմավորման շրջանից, հաղթականորեն ելնելով նոր գրականության լեզվի իրավունքների նվաճման համար ծավալված գրապաշարի բովից, նա դարձավ մեր դասական ու ժամանակակից գեղարվեստական գրականության հարուստ, ճկուն և գեղեցիկ լեզուն, մամուլի, հասարակական-քաղաքական կյանքի, գիտության ու տեխնիկայի պահանջները լիովին բավարարող հզոր լեզուն»¹:

Արդի հայերենի բացատրական բառարաններում ըստ գործածականության կարելի է առանձնացնել հայոց լեզվի բառապաշարի հետևյալ շերտերը.

1. Գրական լեզվի ընդհանուր գործածական բառեր՝ այդ թվում ինչպես գործուն (ակտիվ), այնպես էլ ոչ գործուն (պասիվ) բառապաշարին պատկանող:

Բառապաշարի դասակարգությունն ըստ գործածականության հենվում է մեր գրական լեզվի բառապաշարի պատմական զարգացման ընթացքի և դրա հետևանքը հանդիսացող բառագործածության այժմյան վիճակի վրա: Այս դասակարգման հիմունքը և շափանիշը համաժամանակյա մոտեցումն է, քանի որ բառերը բնութագրվում են գործածականության այժմյան վիճակով:

¹ Փ. Ս. Փիլին. Заметки по лексикологии и лексикографии.—Лексикографический сборник, вып. I, 1957, с. 36.

² Փ. Ս. Փիլին. О новом словаре русского языка.—Изв. АН СССР, Оля. Т. XXII, вып. 3, 1963, с. 189.

³ Էդ. Աղայան. Արդի հայերենի բացատրական բառարան. Երևան, 1976, էջ V:

Մեր ազգային դրական լեզվի բառամթերքի քանակը հասնում է մոտ երկու հարյուր հազարի, որից, սակայն, բացատրական բառարանների մեջ ընդգրկվել է մոտ 140 հազար բառ: Ինքնին հասկանալի է, որ այս բոլոր բառերը, թեև գործածված են աշխարհաբար գրականության մեջ, չեն կարող միևնույն բնութագիրն ստանալ կենսունակության ու գործածականության տեսակետից: Այդ բառերի մի զգալի մասը մեկ կամ մի քանի անգամ գործածվել ու մոռացության է մատնվել, մի մասը գործածվել է և կարող է գործածվել ըստ պահանջի, իսկ մեծագույն մասը կենսունակ ու գործածական է եղել և է այժմ էլ: Դործածականության կանոններն այս տվյալների հաշվառումով մեր զրական լեզվի ամբողջ բառապաշարը կարելի է բաժանել երկու շերտի՝ գործուն բառերի շերտ և ոչ գործուն բառերի շերտ⁴:

1) Գործուն շերտին են պատկանում այն բոլոր բառերը, որոնք սովորական խոսքային իրադրության մեջ գործածական են մեր լեզվի զարգացման արդի փուլում: Դրանք այն բառերն են, որոնք որևէ լեզվով խոսողը ոչ միայն հասկանում, այլև ակտիվ կերպով գործածում է իր ամենօրյա հաղորդակցման ընթացքում: Արդի հայերենի բացատրական բառարաններում ընդգրկվել է հայոց լեզվի գործուն շերտին պատկանող ողջ բառապաշարը, սակայն որոշ տարբերությամբ: ԺԲԲ-ի և ԱԲԲ-ի համեմատությամբ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» ժամանակակից հայերենի բառային կաղիմ պակասավոր է: Աշխարհաբար գրական հայերենի բառապաշարի ողջ հարստությունը բավարար չափով չի արտահայտվել բառարանում: Այն միայն մասամբ է լրացնում հայ նոր գրական լեզվի բառագանձը:

Սա ունեւր իր պատճառը:

Բացատրական ֆառարանի բառացանկը կազմելու երկու աղբյուր գոյություն ունի. առաջին՝ բառարանագիրը պետք է հավաքի բառերը, կարդալով ամբողջ գրականությունը և, երկրորդ՝ օգտագործի մինչ այդ եղած բառարանների բառամթերքը:

Առաջինը իրագործելի չէր մեկ մարդու համար, ուստի Մալխասյանցը սկսում է իր բառարանի աշխատանքները երկրորդ ճանապարհով: Սակայն եղած բառարաններն էլ հիմնականում պարունակում էին գրաբարի և բարբառների բառապաշարը: Նշած բառարաններից վերցնելով բառացանկը, Ստ. Մալխասյանցը կազմում է իր բառարանի կմախքը, որը լրացնում է զանազան երկլեզվյան թարգմանական և մասնագիտական բառարանների նոր բառերով, իր բառարանի բառացանկում ընդգրկված բառերի թիվը հասցնելով 120 հազարի: Ստ. Մալխասյանցի բառարանի հիմնական և կարևոր աղբյուրները եղել են Հայկազյան Հին և Նոր, Առձեռն, Գ. Փեշտամաճյանի և Ս. Գաբամաճյանի բառարանները, որոնք ներկայացնում են հիմնականում գրաբարի բառամթերքը, իսկ բարբառային բառերի համար աղբյուր են ծառայել Ս. Ամատունու և Հր. Աճառյանի բառարանները: Միջին հայերենի և նոր գրական լեզվի բառերը քաղված են ավելի ուշ շրջանի երկլեզվյան բառարաններից:

Բառարաններից քաղված ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը նա աշխատել է մասամբ լրացնել այլ սկզբնաղբյուրներով, իսկ աղբյուրներից դուրս՝ ինքս կարողացել եմ հավաքել մի քանի հեղինակներից (Պողոսյան, Ճուղուրյան, Գամառ-Քաթիպա, Թումանյան և այլն), ժողովրդական երգերից և իմ մայրենի Ախալցխայի բարբառից, ինչպես նաև սովետական ժամանակի հայ մամուլից ու գրականությունից բառեր, որոնց բոլորի գումարը կարծում եմ հասնում է մինչև 3 հազարից⁶։

⁴ Գ. Ջաճարյան, էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. Հայոց լեզու. 1-ին մաս, Ա պրակ, Երևան 1980, էջ 275—276:

⁵ См. А. М. Бабкин. Филологические словари и их источники.—В кн.: Проблема толкования слов в филологических словарях. Рига, 1963, с. 39—47.

⁶ Ս ա. Մ ա լ ի ա ս յ ա ն ց. Հայերէն բացատրական բառարան. հ. 1, Երեւան, 1944, Առաջաբան, էջ ԺԱ—ԺԲ:

Շնորհիվ գրաբարի լիակատար և միմյանց լրացնող, ինչպես և բարբառային բավական հարուստ բառարանների, Ստ. Մալխասյանցի քառահատոր բառարանի բառացանկի համապատասխան բաժինն էլ կազմում է նրա լիակատար և լավ մշակված մասը: Մյուս կարևոր մասը՝ միջին հայերենի և ժամանակակից հայերենի բառային կազմը պակասավոր է: Դրա պատճառը Մալխասյանցի ընտրած բառարանագրական աղբյուրներն են, քանի որ ինքը բառեր քիչ է հավաքել, հիմնականում վերցրել է այն, ինչ արդեն եղել է բառարաններում: Ծվ երկրորդ, Մալխասյանցը իր առաջ նպատակ էր դրել ստեղծել ոչ թե արգի հայերենի, այլ ընդհանրապես հայերենի բացատրական բառարան:

Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» պարունակում է արդի հայերենի գրական լեզվի ավելի քան 125 հազար բառ և դարձվածքային միավոր:

Բառարանի հեղինակները նպատակ են դրել ներկայացնել միայն ժամանակակից հայոց գրական լեզվի՝ ի. Արծվյանից մինչև մեր օրերի բառապաշարը: Որպես ընդհանուր բացատրական բառարան, այն նպատակ է դրել ընդգրկելու գրական լեզվի (արդի գրական հայերենի) բառապաշարը: Բառացանկը կազմվել է հիմնականում հայերեն միալեզվյան և թարգմանական բառարանների, հատկապես Ստ. Մալխասյանցի քառահատորի ընձեռած փաստական նյութի, լեզվի ինստիտուտի կազմած համաբարբառի և հայ գեղարվեստական գրականության ու մամուլի ընտրովի քարտարանի հիման վրա: Այս բառարանի արժանիքներից մեկը պետք է համարել այն, որ հեղինակները կարողացել են բառացանկից դուրս թողնել բազմաթիվ բառեր, որոնք ավանդաբար բառարանից բառարան են փոխանցվել, բայց իրականում ոչ մի կենսականություն չունեն և աշխարհաբարյան գրականության մեջ ոչ մի անգամ չեն գործածվել: Այդպիսի բառերի փոխարեն րառարանը հարստացել է հազարավոր այնպիսի բառերով, որոնք գործածվել են, մասնավորապես, գործածական են մեր դրական լեզվում: Հատկապես մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնք մուտք են գործել հայոց լեզվի մեջ խորհրդային շրջանում և արտացոլում են մեր հասարակական կյանքը, գիտության, տեխնիկայի, արտադրության, կենցաղի այժմյան վիճակը: Ամենից առաջ՝ այն պարունակում է բազմահազար բառեր, որոնք, բնականաբար, չէին կարող տեղ գտնել նախորդ և ոչ մի բառարանում: Այսպես, օրինակ, ԺՌՌ-ում գեա-ից մինչև գեաբնկեց-ը ներկայացված է 75 բառ, իսկ ՀՌՌ-ում՝ 53 բառ, ընդ որում ԺՌՌ-ում կան 35 նոր բառեր, որոնք չկան ՀՌՌ-ում: ԺՌՌ-ում ու տառով ներկայացված է 665 բառ, իսկ ՀՌՌ-ում՝ 437: Պետք է նշել, որ ռադիո բառով ԺՌՌ-ում կա 85 բարդություն, իսկ ՀՌՌ-ում՝ 23: Մալխասյանցի բառարանում չկան այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ռադիոնյութ, ռադիոզոնդ, ռադիոլուկատոր, ռադիոլուսանկարել, ռադիոկայմ, ռադիոկոմիսե, ռադիոհաղորդավառ, ռադիոմեկնաբան, ռադիոցանց և այլն:

Կամ՝ ԺՌՌ-ում ֆ տառով կա 645 բառ, իսկ ՀՌՌ-ում՝ 356, Մտարբերել բառից մինչև մտածել-ը ԺՌՌ-ում կա 50 բառ, իսկ ՀՌՌ-ում՝ 356:

Բառարանում տեղ են գտել բազմաթիվ նոր բառեր, որոնք նախորդ ոչ մի բառարանում չեն արձանագրվել և առաջին անգամ արձանագրվելով, բնականաբար, նաև առաջին անգամ են բացատրվում (դրոզ, զետատուր, զետակինն, գետաթոնի, պատվոգիր, ուղեծիր, չմշկավազ, չմշկասան, հրթրիո և այլն):

էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» պարունակում է մոտ 136 հազար բառ և 11 հազար դարձվածքանական միավոր: Արդի գրական հայերենի լիակատար բառարան ստեղծելու համար, ինչպես նշում է հեղինակը, անհրաժեշտ էր ձեռքի տակ ունենալ հայ գասական և ժամանակակից հարուստ գեղարվեստական գրականության, տրվեստի, դի-

7 Հմմտ. ի. Պետրոսյան. Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» — լեզվի և ոճի հարցեր (հոդվածների ժողովածու 1), Երևան, 1960, էջ 388:

տություն, ինչ: ևս նաև հյանքի այլևայլ բնագավառների հետ կապված բա-
ռապաշար:

Տարիներ շարունակ հեղինակը քարտագրել է մեր գրականությունը՝ սկսած հաշատուր Արուսյանից մինչև մեր գարի 70-ական թթ. ընկած ժամա-
նակաշրջանը: Այդ ձևով ստեղծել է կես միլիոնից ավել քարտ պարունակող
մի բարտարաւ, որտեղ ներկայացված բառերի զգալի մասը մինչ այդ լույս
տեսած բառարաններում տեղ չի գտել: Բառարանը հիմնականում ամփոփում
է տրդի հայ գրական լեզվի դործուն բառապաշարը: Նպատակ ունենալով
ստեղծել ոչ ինչ ընդհանրապես հայոց լեզվի, այլ հայերեն նոր գրական լեզ-
վի բառարան, հեղինակը այն չի ծանրաբեռնել գրաբարյան ու միջին հայերե-
նի հնացած ու գործածությունից դուրս եկած, ինչպես նաև միայն բարբառ-
ներում հանդիպող բառերով, դրանց փոխարեն տեղ է տվել լեզվի ժամանա-
կակից փուլում գործածվող բազմաթիվ նոր բառերի: Ստ. Մալխասյանցի
բառարանի 57300 դորբարյան հնացած և բարբառային բառեր դուրս են
մնացել, դրանք փոխարեն՝ բառացանկում 74100 նոր բառեր են ավելացել,
որոնց օրյակով և սուրյակով պատճառներով չկան նախորդում: էդ. Աղա-
յանի բառարանը 12000 բառաշողվածով ավելի է ժՐՐ-ից:

2) Ոչ գործուն շերտին են պատկանում այն բառերը, որոնք դուրս են
եկել գործածությունից կամ էլ նորակազմ ու նորամուտ բառեր են և սովո-
րական խոսքային իրադրության մեջ չեն գործածվում: Այդ բառերը կարող
են նաև դործուն շերտին ատկանած լինել մեր լեզվի զարգացման անցած
փուլերում: Ժամանակի ընթացքում դուրս գալով գործածությունից, դրանք,
սակայն, պահպանվում են բառապաշարի ընդհանուր գանձարանում և կա-
րող են գործածվել համապատասխան խոսքային իրադրության մեջ:

Այս շերտին պետք է հատկացնել նաև հազվադեպ գործածվող բառերը:
Ոչ գործուն շերտի բառերն, իրենց հերթին, բաժանվում են հետևյալ
ենթաշերտերի.

ա) Հնացած բառեր

Հնացած են այն բոլոր բառերը, որոնք գործածական են եղել մեր գրա-
կան լեզվում նրա պատմության տարբեր փուլերում և այժմ կամ բոլորո-
վին չեն գործածվում, կամ էլ գործածվում են առանձին դեպքերում: Այս
տիպի բառեր երեք բաժանաներում էլ կան: Ստ. Մալխասյանցի բառարա-
նում այդպիսի բառերը առանձնանում են (•) նշանով, որը նշանակում է հին
կամ հնացած բառ կամ նշանակություն: Այսպես.

⊙ Ակմբել—հմբվել, մի տեղ հավաքվել (ՀՐՐ):

⊙ Ակնածու—նա որ ակն է ածում (ՀՐՐ):

Ամբոխել, (հնց.)—շուղթ, խառնակել, տակն ու վրա անել (ԺՐՐ):

Ամբողջացուցիչ, (հնց.)—Ամբողջացնող, կիսաա, թերի մասերը
լրացնող (ԺՐՐ):

Անճնազոր, (հնց.) Ուժեղ, կտրիճ (ԱՐՐ):

Դեղախոս, 2. (հնց.) Գեղեցիկ երգող (ԱՐՐ):

բ) Հին բառեր (պատմաբառեր)

Դրանք այն բառերն ու բառային ձևերն են, որոնք փոխառվում են գրա-
բարից ու միջին հայերենից՝ ստեղծագործական խոսքի պահանջներով և չեն
անցնում գործուն շերտին, ինչպես նաև բազմաթիվ դրաբարյան բառերը,
որոնք պատմագիտական տեղմիջային նշանակություն ունեն և ըստ հարկի
գործածվում են բանասիրական, տրամական և այլ կարգի գրականու-
թյան մեջ:

8 Տե՛ս Գ. Զահուկյան, էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան.
նշվ. աշխ., էջ 304:

9 Նույն տեղում, էջ 306:

Դժվել, (խոսկց.) անկազարվել, խելքը կորցնել (ԺԲԲ):
Լսար, (խոսկց.) տե՛ս Այսօր (ԺԲԲ):

2) Գաղափարական (բարբառային) բառերը գործածության ավելի սահմանափակ շրջանակներ ունեն։ Դրանք հայերեն տասնյակ բարբառների բառերն են։

Քննարկվող երեք բառարաններում էլ կան բարբառային բառեր, այսպես՝

Առավառուց, (զվռ.)։ Առավոտվանից (ԱԲԲ):
Արխային, (զվռ.)։ 1. Հանգիստ, միամիտ (ԱԲԲ):
Թուլափայ, (բբ.)։ 1. Շան լակոտի բաժին (ԺԲԲ):
Խոնքոշ, (բբ.)։ Միրունիկ, կոկիկ (ԺԲԲ):

Ստ. Մալխասյանցի բառարանում բարբառային (գաղափարական) բառերն առանձնահատուկ են + նշանով, օրինակ՝

+ Հանց, Պարապ, դատադկ:
+ Դան, 1. Վեգ, 2. Մարգկանց և կենդանիների ուտքի կոճ:

Ե) Նորագույն փոխառություններ

Այստեղ նկատի ունենք նորագույն այն փոխառությունները, որոնք չունեն իրենց հայերեն համազորները կամ գործածվում են հայերեն համանշանակների հետ զուգահեռաբար։ Բացատրական բառարան կարելի է մտցնել միայն այնպիսի օտար բառեր և արտահայտություններ, որոնք տրվում են գրական այբուբենով¹²։ Բառարաններում ընդգրկված փոխառությունները կարելի է բաժանել երկու խմբի.

1) Փոխառություններ, որոնք չունեն իրենց հայերեն համազորները, այսպես՝

Ամնիստիա (հուն. amnistia, մոռացումն, ոռու-ից)։ 1. Մոռացումն հանցանքների...

2. Օրենսդրական ակտ, որով ներումն է շնորհվում (ՀԲԲ):

Ագիտացիա (ֆր. agitation, ոռու-ից), գործողություն, որ նպատակ ունի ժողովրդին տրամադրել հօգուտ որևէ գաղափարի կամ ձեռնարկության (ՀԲԲ):
Ասիմիլյացիա, 1. Որևէ ժողովրդի ձուլումը մի այլ ժողովրդի հետ (ԺԲԲ):
Արսենալիզմ, Հնարություններից ընտրողների մասսայաբար խուսափելը (ԱԲԲ):

2) Փոխառություններ, որոնք գործածվում են հայերեն համանշանակների հետ զուգահեռաբար, օրինակ՝

Ակցիա (լատ.—ֆր. action, գործողություն, ոռու-ից), Բաժնեքուլք (ՀԲԲ):

Ալտերնիվ, տե՛ս Ալյասիբուրյուն (ԺԲԲ):

Արեւմտեան, Բաժանորդագիր (ԱԲԲ):

զ) Գիտատեխնիկական տերմիններ

Գիտատեխնիկական հեղափոխության արդի դարաշրջանում գիտության, տեխնիկայի, արտադրության բոլոր ճյուղերի աննախընթաց զարգացումը խթանեց նաև լեզուների բառապաշարի, մասնավորապես տերմինաբանության վիթխարի հարստացումը, մշակումն ու կատարելագործումը։ Այս իրողությունը ժամանակակից լեզուների զարգացման գործընթացի կարևորագույն կողմերից մեկն է և, բնականաբար, ամեն մի լեզվի մշակման, հարըստացման ու կատարելագործման գործնական խնդիրների լուծման մեջ իր առանձնահատուկ կարևորությունն ունի¹³։

Ինչպես նշում է Ս. Ի. Օժեգովը, ընդհանուր լեզվի բացատրական բառարանում այդ կամ այն հասկացության տերմինների ընտրության ժամա-

¹² Л. В. Малаховский. Принципы отбора иноязычных слов для словаря русского языка.—В кн.: Современная русская лексикография 1976, Л., 1977, с. 7.

¹³ Է. Վ. Վալեն. Լեզվաբանության հիմունքները. Երևան, 1987, էջ 422:

նակ անհրաժեշտ է հաշվի առնել առաջին հերթին տերմինի կարևորությունը, նշանակությունը համաժողովրդական առօրյա բառապաշարի տեսակետից:

Մասնագիտական-արտադրական տերմինաբանության տեղի հարցը ժամանակակից բացատրական բառարաններում պատահական չէ: Մասնագիտական տերմինների թիվը գիտության տարրեր փոփոխում, տեխնիկայի ու արտադրության մեջ շատ մեծ է և ոչ մի ընդհանուր բառարան, որքան էլ որ ծավալով մեծ լինի, չի կարող ընդգրկել բոլորը: Այդ իսկ պատճառով հարց է առաջանում, թե ի՞նչ տերմիններ և ի՞նչ հիմքի վրա պետք է ընդգրկվեն բառարան: Այդ խնդիրը այժմեականություն է ձեռք բերում մեր օրերում, երբ տեղի է ունենում լեզվի բառապաշարի նշանակալի լրացում տերմինաբանությամբ¹⁴:

Ստ. Մալխասյանցը վերը նշած աղբյուրներից բացի օգտվել է նաև բժշկական, ռազմական, շինարարական, երկաթուղային տերմինների բառարաններից: Սակայն ինչպես ինքն է խոստովանում, այդ վերջին աղբյուրներից ինքը օգտվել է ընտրովի, խուսափելով զուտ մասնագիտական տերմիններից: Խորհրդային շրջանում տեխնիկայի, գիտության ձեռք բերած հաջողություններն արտացոլվել են այդ տարիներին լույս տեսած բազմաթիվ տերմինաբանական, մասնագիտական բառարանների մեջ և Ստ. Մալխասյանցն ի վիճակի է եղել օգտվելու 20—30-ական թթ. տերմինաբանական բառարաններից: Մալխասյանցը հատկապես օգտվել է Մ. Աբեղյանի ռազմական բառարանից, սակայն շատ տերմիններ աչքաթող է արել կամ գիտակցաբար չի վերցրել:

«Ժամանակակից հայոց լեզվի բառարանում» մեծ տեղ է հատկացված տերմիններին: Սույն բառարանում ընդգրկված են գիտության, տեխնիկայի, արտադրության, մշակույթի ու կենցաղի տարրեր բնագավառներին պատկանող տերմիններ ու գիտաբանություններ: Համեմատելով ք տառի տակ եղած բառերի ու տերմինների քանակը Ստ. Մալխասյանցի բառարանի համապատասխան մասի հետ, ստանում ենք հետևյալ պատկերը. ՀՌԲ-ում Բ տառի տակ եղած 5164 բառից 99-ն են տերմիններ, իսկ ԺՌԲ-ում 4318-ից՝ 119-ը: Ինչպես տեսնում ենք, տարբերությունը նկատելի է: Հիմնական պատճառը այդ բառարանների միջև ընկած ժամանակամիջոցում տեխնիկայի, գիտության զարգացումն է, նորանոր հասկացությունների, ուստի և նրանց համապատասխան գիտաբանների ստեղծումը:

էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ընդլայնված է գիտատեխնիկական տերմինների ցանկը: Հեղինակը կատարել է տերմինների հաջող ընտրություն, ավել է դրանց իմաստների ճշգրիտ բացատրությունը, որոշակիորեն սահմանադրել է գործածության շրջանակները: Գ տառի տակ եղած բառերի ու տերմինների քանակը լեզվի ինստիտուտի բառարանի համապատասխան բաժնի համեմատությամբ տալիս է հետևյալ պատկերը. էդ. Աղայանի բառարանում Գ տառի տակ կա 5154 զխառնու, որից 172-ը տերմիններ են, իսկ ԺՌԲ-ում՝ 3892, որից 115-ն են տերմիններ:

2. Բացատրական բառարանում շրջագրվող բառերը

Ժամանակակից գրական լեզվի նորմատիվային բառարանում տեղ չպիտի գտնեն այն բառերը, որոնք ներկայումս դուրս են ընկել գրական լեզվի կենդանի համակարգից: Սակայն ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, հիշյալ բառարաններում այդպիսի բառեր շատ կան: Այդ բառերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) նեղ բարբառային (գավառական) այն բառերը, որոնց համազորները կան լեզվում: Այսպես՝ Ստ. Մալխասյանցի բառարանում դրանց թիվը բա-

¹⁴ Փ. Ս. Сороколетов. О месте производственной терминологии в толковом словаре русского языка.—Лексикографический сборник, вып. I, 1967, с. 121.

վական մեծ է: Օրինակ՝

+ Աբիկ — Աբար: + Աբրեշում — Մետաֆս:

+ Աղենալ — Ուշանալ: + Կզուզ — զգզզված, խառնակ, անկարգ, շատ ներված են:

ԺԲԲ-ում եւ նեղ բարբառային բառերը շատ են: Այսպես՝ ի տառի տակ բերված 3884 գլխաբառից 63-ը բարբառային են, որոնք ունեն արդի գրական հայերենում իրենց համարժեքները:

Լավանդ (բրբ.), 1. նրես առած, ապերասան, ստահակ: 2. Մուլլ, անբան, թամբալ:

Լեփուկ (բրբ.), Թակարդ: Կամ՝ Աշել (բրբ.), Նայել:

Բ, Հին և հնացած բառեր և իմաստներ

Գրական լեզվի բացատրական բառարանի համար հնացած են այն բոլոր բառերը, որոնք ինչ-որ ժամանակ գործածվել են աշխարհաբար արևելյան դրական լեզվում, ապա դուրս են եկել գործածությունից՝ փոխարինվելով այլ բառերով կամ բառային այլ ձևերով: Այդ բառերի գործածությունը ժամանակակից հայերենով արտահայտված գրավոր կամ բանավոր խոսքում պետք է հնարանություն համարել և բառարանում ընդգրկելը՝ ավելորդ:

Ստ. Մալխասյանցի բառարանում այդպիսի բառերը բավական շատ են.

Ազգահամարել — Աղդահամար կազմել:

Ախթիկ — Մրուր, դիրտ են:

ԺԲԲ-ում եւ քիչ չեն նման բառեր: Այսպես՝ ի տառի տակ հանդիպում են 30 հնացած բառեր.

Լաշկար, (հնց.) Բանակ, զորք:

Մանրահարկել, (հնց.) Մանր տուրքեր դնել, ծանր տուրքերով հարկադրել են:

Թեև սակավ, բայց այդ կարգի բառեր հանդիպում են նաև էդ. Աղայանի բառարանում: Օրինակ՝

Ամբարձում, (հնց.) 1 Վեր բարձրացնելը՝ բարձրանալը: 2. Բարձրություն:

Թռչակարկղ, (հնց.) Թռչակառունների թռչակ վճարող դրամարկղ՝ դանձարկղ:

դ) Հազվադեպ գործածվող բառապաշարի որոշ մասը, այսինքն՝ այն բառերը, որոնք ստեղծվում ու գործածվում են այս կամ այն անհատի կողմից, բայց չեն գործածվում ուրիշների կողմից և, հետևաբար, չեն ընդունվում, կամ ստեղծվում են առանձին հեղինակների կողմից՝ որոշակի նպատակադրումով և չեն տարածվում հենց այն պարզ պատճառով, որ պայմանավորված են տվյալ խոսքային իրադրությամբ ու ստեղծագործական նպատակադրումով¹⁵: Այնուամենայնիվ այդպիսի բառեր քննարկվող բառարաններում շատ կան, այսպես՝

Ամեհամուլ — Ամեհի մղող կամ ամեհաբար մղող (ՀԲԲ):

Անզգամիտ — Զգացող, չմտածող (ՀԲԲ):

Լավաժայթ, (հզվղ.) Լավայի առումիժում, ժայթքում (ԺԲԲ):

Ամառել, (հզվղ.) Ամառը մի ուրիշ տեղում անցնել (ԺԲԲ):

Աշակերտատետր, (հզվղ.) Աշակերտական տետր (ԱԲԲ):

Գլխաշախշախ, (հզվղ.) Գլուխը ջախջախված (ԱԲԲ):

դ) Նեղ մասնագիտական բառեր, որոնք ծանրաբեռնում են բառարանը.

Ալեգի, (տեխ.) էլեկտրական ալիքները գրանցող գործիք (ԺԲԲ):

Ակնատ, (բժշկ.) Ստամոքսի կամ 12-մատնյա աղիքի պատի մասնակի վնասումից առաջացած խորշ (ԱԲԲ):

Բուրբակ, Լարավոր նվագարանի ականջ (ԱԲԲ):

¹⁵ Տե՛ս Գ. Զահեկյան, էդ. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. նշվ. աշխ., էջ 305:

բ) նորագույն այն փոխառությունները, որոնց համազորները կան լեզվում և այդպիսի բառերի գործածությունը ընդունելի չէ:

Լեզվում, ըստ իրենց ներթափանցման աստիճանի, փոխառությունները կարող են լինել յուրացված և չյուրացված: Վերջինիս են վերաբերում տնտեսական, բաղաձայնական, մշակութային և այլ կապերի շնորհիվ, ինչպես նաև գրքային ճանապարհով հայերենում մուտք գործած այն օտարազգի բառերը, որոնք չեն յուրացվում լեզվի կողմից և չեն մերվում նրա բառային կազմի մեջ, մեկուսացած և միայնակ մնալով, լեզվի համակարգում դիտվում են իբրև օտար բառեր: Բառարանում օտար բառերի առկայության հիմնական չափանիշ սեռ է ընդունել ոչ թե բառի յուրացման աստիճանը, այլ նրա գործածությունը հաճախականությունը ժամանակակից գրական լեզվում: Միևնույն ժամանակ բառարան չի կարելի մտցնել այն օտար բառերը, որոնք պատահաբար են անցել գրական տեքստ կամ գործածվում են սլոտաճական իրադրություններում և հատուկ չեն մեր իրականությանը¹⁶:

Սակայն հակառակ այս սկզբունքին, մեր ուսումնասիրած բառարաններում հանդիպում են նաև այդպիսի բառեր: Օրինակ՝

Գեոգրիա, Երկրաբաշխություն (ԱՐՐ):

Լեկտո, Դասախոս (ԱՐՐ):

Բիզլոգ Կենսաբան (ԺՐՐ):

Ֆինալ Ավարտ, վերջ, վախճան (ԺՐՐ):

Այսպիսով, քննելով արդի հայերենի բացատրական բառարանների բառապաշարը, գալիս ենք հետևյալ եզրակացության.

ա) Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» պարունակում է 120 հազար բառ և 9 հազար դարձվածաբանական միավոր: Շնորհիվ գրարարի և բարբառային հարուստ բառարաններից քաղված բառապաշարի, Մալխասյանցի բառարանի բառացանկի համապատասխան մասն էլ կազմում է նրա լիակատար և լավ մշակված մասը: Բառացանկի մյուս կարևոր մասը՝ միջին հայերենի և ժամանակակից հայերենի բառային կազմը պակասավոր է: Այդ առումով մոտավոր հաշվումներով արդի գրական լեզվի 40—50 հազար բառային և դարձվածքային միավորներ տեղ չեն գտել բառարանում: Բառարանագրական մշակման շենթարկված հիշյալ բառային միավորների զգալի մասը կազմում են վերջին տասնամյակների նորաբանությունները, մնացածը՝ XIX—XX դդ. հայ դասական գրականության, մամուլի, թարգմանական ու գիտահանրամատչելի գրականության մեջ և այլ աղբյուրներում սփռված բառերն ու դարձվածքները: Դա ունի իր պատճառները. նախ՝ Մալխասյանցի ընտրած բառարանագրական աղբյուրները, որոնցում արդի հայերենի բառապաշարը աղքատ է ներկայացված և երկրորդ՝ Մալխասյանցը իր առջև նպատակ էր դրել ստեղծելու ոչ թե արդի հայերենի, այլ ընդհանրապես հայերենի բացատրական բառարան:

բ) Լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» պարունակում է արդի հայերեն գրական լեզվի ավելի քան 125 հազար բառ և 10 հազար դարձվածքային միավոր: Բառարանը ընդգրկել է հայոց գրական լեզվի բառապաշարը՝ և. Աբովյանից մինչև մեր օրերը: Այս բառարանի արժանիքներից մեկը պետք է համարել այն, որ հեղինակները բառացանկից դուրս են թողել քաղվածքով բառեր, որոնք ավանդաբար բառարանից բառարան են փոխանցվել, բայց իրականում լեզվում ոչ մի կենսականություն չունեն և գրականության մեջ չեն գործածվել: Դրանց փոխարեն բառարանի բառացանկը հարստացել է քաղվածքով նոր բառերով: Հատկապես մեծ թիվ են կազմում այն բառերը, որոնք մուտք են գործել մեր լեզվի մեջ խորհրդային շրջանում և արտացոլում են հասարակական կյանքը, գիտության, տեխնիկայի, արտադրության, կենցաղի այժմյան

¹⁶ Հմմտ. Л. В. Малаховский. Указ. соч., с. 101—103.

վիճակը: Այնուամենայնիվ բառարանի բառացանկը անթերի համարել չի կարելի: Նրանից դուրս են մնացել բազմաթիվ գործածական բառեր:

գ) էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» պարունակում է 136 հազար բառ և 11 հազար դարձվածաբանական միավոր: Բառարանը հիմնականում ամփոփում է արդի գրկան հայերենի բառապաշարը: Այն չի ծանրարենովել գրաբարյան ու միջին հայերենի նախած ու գործածությունից դուրս եկած, ինչպես նաև նեղ բարբառային բառերով, գրանց փոխառեն բառացանկում աեղ են գաել լեզվի ժամանակակից փուլում գործածվող բազմաթիվ նոր բառեր: Սա. Մալխասյանցի բառարանի 57300 գրաբարյան հնացած և բարբառային բառեր դուրս են մնացել, գրանց փոխառեն 74100 նոր բառեր են ավելացել, որոնք օրյեկտիվ և սուբյեկտիվ աստեղծաոներով չկան նախորդում: էդ. Աղայանի բառարանը 12000 բառահոգվածով ավելի է ժՐՐ-ից: Բառարանում մեծ աեղ է հատկացված տերմինաբանությանը:

ВОПРОС ВЫБОРА СЛОВАРНОГО ЗАПАСА АРМЯНСКИХ ТОЛКОВЫХ СЛОВАРЕЙ

Р. А. МАРКАРЯН

Резюме

При составлении любого толкового словаря на первый план выступает вопрос выбора словарного запаса. В статье исследован словарный запас следующих армянских толковых словарей: С. Малхасянц. «Армянский толковый словарь». Ереван, 1944—45, т. 1—4; «Толковый словарь современного армянского языка», авторский коллектив Института языка им. Ачаряна. Ереван, 1969—81, т. 1—4; Эд. Агаян. «Толковый словарь армянского языка». Ереван, 1976. Древнеармянский раздел словника словаря С. Малхасянца составляет его наиболее разработанную часть. Другая важная часть словника—словарный состав среднеармянского и современного армянского языка—неполная. Авторы словаря Института языка не включили в словник многочисленные слова, которые по традиции переходили из словаря в словарь, хотя не обладали жизненностью и не использовались в литературе. Вместо них словник обогатился множеством новых слов, среди которых большое количество составляют слова, отражающие современное состояние общественной жизни, науки, техники, производства, быта. Тем не менее, словник этого словаря не лишен недостатков. Словарь Эд. Агаяна включает в основном лексику современного армянского литературного языка. Он наперегружен древнеармянскими и среднеармянскими устаревшими и вышедшими из употребления словами, вместо них в словнике нашло место множество новых слов.